զմեզ և ոչ մեք էաք, մեք միմիայն նմայ հնազանդ և խաչն արօտի նորայ, և այս հնազանդութիւն զօրութեան հոգոյ մերոյ առ Տեառն ոչ ըստ կամաց մերոց և ոչ 'ի նոր ցանկութեան սրտից մերոց և ոչ 'ի փոփոխական բնութենէ մերմէ, և ոչ 'ի տարբերութենէ ժամանակէ, եթէ ոչ նոյն որում սկզբանէ արարածոց Արարիչն մեր փչեաց 'ի մէջ բնութեան մերոյ, թէպէտ մեք ոչ իմացաք և ոչ պահեցաք պատուէրն Արարչին մերոյ անկարգացաք, անօրինեցաք և անցանելով կանոնաւն Տեառն արարչին մերոյ անկաք և նմանեցաք անբանից, այլ որպէս հաւատացեալ եմք խոստմանն ծայրագոյն բարւոյն Տեառն մերոյ Յիսուսի որ ասաց՝ եկեալն առ իս ոչ հանից զնայ արտաքս, թէպէտ 'ի վաղնջոց անկեալ կամք 'ի փառաց զօրութեան հոգոյ մերոյ բանականի, այլ դեռ ևս 'ի մահ ոչ եմք մատնեալ, վկայութիւն նորայ հաստատուն է 'ի սիրտս մեր, որ 'ի անկարգութեան մեղաց մերոց խրատեցաք մեք 'ի Տեառնէ, այլ բնականապէս գիտեմք որ ոչ ոք խրատող ունի կամք բարձի թողի առնելոյ զխրատեալս իւր ըստ բանին Տեառն որ ասէ՝ ով ոք որ տէր խրատէ սիրէ զնայ, և զհաստատելոյ բանն իմ ասեմ զի այսքան ևս վաղնջոց ժամանակաւ անկարգութեամբ վարիւք և յանդգնելով պատուիրանին Տեառն, թէպէտ մեք ըստ գործոց մերոց բարձաք պատիւ ազատութեան և անմա-